

Բ Ա Ն Ա Հ Յ Ո Ւ Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ф О Л Ь К Л О Р
F O L K L O R E

ՀՏԴ՝ 398. 3

ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀՈՌՈՄՆԵՐԻ
ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐՆ ՈՒ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Գևորգ Ղազարյան

Աթենքի ազգային համալսարան

Բանալի բառեր՝ *ազգագրություն, հայ բանահյուսություն, հեքիաթ, Սբ Գևորգ, Սբ Նիկողայոս, Ակն, ուղղափառ հայեր:*

Հաղորդման մեջ ներկայացվում են հայ հոռոմների բանահյուսական ժառանգության մեջ ուշագրավ էջ հանդիսացող ակնցիների ավանդապատումները: Դրանց մի մասը հրաշապատում ժանրից է: Այս խմբում են Սբ Գևորգ Զորավարի և Սբ Նիկողայոս Սքանչելագործի մասին հրաշապատումները, որտեղ այդ սրբերը հանդես են գալիս որպես ծառերի պաշտպաններ և խստորեն պատժում են բնության դեմ մեղանշողներին: Բացի այդ, Նիկողայոս հայրապետը ակնցիների հրաշապատումներում ներկայանում է որպես քրիստոնյաների պաշտպան սուրբ: Պատումների մի այլ խումբ հեքիաթի ու անեկդոտի ժանրերին է պատկանում: Աշխատանքում տեղ են գտել հունական արխիվային փաստաթղթերից ու տպագիր նյութերից քաղված նորահայտ տեղեկություններ հայ հոռոմների հարսանեկան ու թաղման ծեսերին, եկեղեցական կյանքին ու առօրյային առնչվող ավանդույթների ու սովորությունների մասին, որոնք թույլ են տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել հայ ժողովրդի այդ յուրահատուկ էթնո-դավանական խմբի ազգագրական պատկերի մասին:

Լախարան. Հայ հոռոմները՝ ուղղափառ (օրթոդոքս) հայերը, մեր ժողովրդի կարևոր մի հատվածն են, և ուրույն տեղ ու նշանակություն ունեն հայոց պատմության ու հոգևոր-մշակութային ժառանգության մեջ: XIX դ. և XX դ. սկզբի դրությամբ Արևմտյան Հայաստանում նրանք հիմնականում բնակվում էին Ակնի

Վանք, Չորակ, Շրգու և Մուշեղկա, Երզնկայի Հողուս, Չմշկածագի Մամսա, Մեթրկա և Խնդրկիկ գյուղերում¹: Հայ հոռոմները հայության քիչ ուսումնասիրված խումբ են, ուստի նրանց մասին նոր տեղեկությունների վերհանումն ու հրապարակումը կարևոր է հայագիտության համար²: Այս տեսանկյունից արժեքավոր են այն տեղեկությունները, որոնք անցյալ դարի ընթացքում հավաքվել են 1924 թ. Հունաստան գաղթած հայ հոռոմներից: Ազգագրական այդ նյութը մեծավ մասամբ անտիպ է, և սույն հրապարակմամբ նպատակ ունենք այն հասանելի դարձնելու հայրենական հետազոտողների համար³:

Ավանդապատումներ

Ինչպես ասվեց վերը, ակնցի հայ հոռոմների բանահյուսական ժառանգության⁴ մեջ ուշագրավ են Սբ Գևորգի ու Սբ Նիկողայոսի մասին

¹ Ակնի վերոնշյալ գյուղերից ու Հողուսից XV-XVII դդ. գաղթած հայ հոռոմները բնակություն էին հաստատել պատմական Բյուրանիայի (Բզմիթի) նահանգում՝ հիմնելով Օրթագյուղ ու Խուդի գյուղերը, ինչպես նաև Ֆնդզի գյուղախումբը: Նրանց մասին տե՛ս **Բարթիկյան Հ.**, «Հայ-հոռոմները (քաղկեդոնիկ հայերը) հունական պարբերականներում»//Պատմա-բանասիրական հանդես, 2008, թիվ 3, էջ 237-260:

² Հայ հոռոմների մասին տե՛ս **Ճանիկեան Յ.**, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 55-60: Ակն եւ ակնցիք, նախաձեռնեց եւ հաւաքեց **Ա. Քէչեան**, աշխ. եւ խմբ. **Մ. Պարսամեան**, Փարիզ, 1952, էջ 615, 621: Ակն և Ակնցին. 1020-1915, հաւաքեց, դասաւորեց եւ խմբագրեց **Ա. Քէչեան**, Պուրբէշ, տպ. «Հայ մամուլ», 1942, էջ 49-53; **Kévorkian R., Paboudjian P.** Les Arméniens dans l'Empire Ottoman à la vielle du Génocide, Les Editions d' Art et d'Histoire "Arhis", Paris, 1992, էջ 138-140, 379-380, 386, 456; **Georgelin H.** «Arméniens ou Grecs? Les Hay-Horoum aux XIX^e et XX^e siècles»//L'Église arménienne entre Grecs et Latins, fin XI^e- milieu XV^e siècle, textes réunis par I. Augé et G. Dédéyan, Geuthner, Paris, 2009: **Ղազարյան Գ.**, «Ակնի հայ հոռոմները»//Վարձք, № 12, 2016, էջ 19-26: **Ղազարյան Գ.**, «Ակնի Վանք գյուղի 1787 թվականի հայ հոռոմների Ավետարանը»//Բանբեր Մատենադարանի, 24, 2017, էջ 221-232: **Ղազարյան Գ.**, «Հայ հոռոմների ազգային ինքնության խնդրի շուրջ»//Լյուրեր ակադեմիկոս Լ. Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28-29 հունիսի 2018 թ.), Եր., Մատենադարան, 2019, էջ 180-204:

³ 1962 թ. Աթենքի Փոքրասիական հետազոտությունների կենտրոնի (Κέντρο Μικρασιατικών Σπουδών) աշխատակցուհի Է. Ղազին մեկնել է Հունաստանի Էվիա կղզու Կաստանիոտիսսա գյուղ, որտեղ հաստատված են գաղթական ակնցի հայ հոռոմները, և նրանից տեղեկություններ է քաղել: Ղազինի հավաքած նյութը պահվում է Կենտրոնի պահոցում: Մեզ հետաքրքրող բանահյուսական նյութը անթեղված է Ակնի Վանք և Մուշեղկա գյուղերին նվիրված ծրարներում (տե՛ս Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Βανκ», նույն տեղում, Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Μουσεγκά»): 2013 թ. Կաստանիոտիսսա գյուղ կատարած մեր այցելության ժամանակ ակնցի հայ հոռոմների շառավիղներից մեզ հաջողվեց գրի առնել մի քանի պատումներ, որոնք մինչ այդ անհայտ էին:

⁴ Ակնագետ, Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս Հ. Ճանիկյանը (1840-1902 թթ.) իր աշխատության մեջ ներկայացրել է ակնցի հայ հոռոմների մեջ լավագույնս պահպանված անտունիները (որոնք նոտայագրել է Կոմիտաս վարդապետը), մի քանի այլ երգեր և մեկ պատում (տե՛ս **Ճանիկեան Յ.**, նշվ. աշխ., էջ 203, 426-454, 472-473, 497-500):

ավանդապատումները, որոնց մի մասը հրաշապատում ժանրից է⁵: Մբ Գևորգը հնուց ի վեր Վանք գյուղի պաշտպանն է համարվել⁶: Գյուղի հին եկեղեցին՝ բնականաբար նվիրված Մբ Գևորգին, գտնվել է գյուղամերձ անտառի մեջ⁷: Այս անտառի հետ կապված ակնցի հայ հոռոմների մեջ պահպանվել են երկու նույնատիպ հրաշապատումներ: Դրանցից առաջինը հետևյալն է. «Չորպաջի» անունով մի թուրք հովիվ գնում է Մբ Գևորգի անտառ՝ ծառ կտրելու: Գործն ավարտելուց հետո նա պատրաստվում է փայտը շալակած տուն վերադառնալ, երբ հանկարծակի իր առաջն է կտրում երիտասարդ մի ձիավոր՝ մոխրագույն ձիով ու կարմիր թիկնոցն ուսերին: Ձիավորը՝ նույն ինքն Մբ Գևորգը, մոտենում է թուրքին, սուրը քաշում, պահում է նրա վրա՝ ասելով.

-Եթե հաջորդ անգամ անտառ գաս՝ ծառ կտրելու, քեզ կտոր-կտոր կանեմ: Եթե ուզում ես՝ չոր ծառերը կտրիր, բայց դալար ծառերի վրա ձեռք չբարձրացնե՛ս:

Թուրքը սարսափահար հասնում է Վանք: Դրանից հետո որևէ թուրք այլևս չի համարձակվում Մբ Գևորգի անտառը մտնել⁸:

Երկրորդ պատումի համաձայն՝ մի թուրք կին է մտնում նույն անտառն ու կիսականաչ մի ծառ է կտրում: Երբ ծառն ընկնում է, և կինը մոտենում է՝ այն շարժելու, կաշում-մնում է ծառին: Հայտնվում է կնոջը անտեսանելիորեն ծառին կապած ձիավոր Մբ Գևորգը՝ կարմիր թիկնոցն ուսերին: Թրքուհին անշարժացած է մնում մինչև ուշ երեկո՝ ճշալով և օգնության կանչելով: Օրվա վերջում կնոջ երեխան տնից դուրս է գալիս՝ տեսնելու, թե մայրն ինչ եղավ անտառում: Կինը տղային է պատմում զլխին եկածի մասին՝ խոստանալով, որ այլևս անտառ ոտք

⁵ Հայ հոռոմների մեջ պահպանված այդ պատումները եզակի են հայ բանահյուսության համար, քանի որ այս երկու սրբերի մասին՝ բացառությամբ Մոկաց Փոլոկու Մբ Գևորգ վանքի պարագայի, հայոց մեջ այլ պատումներ վկայված չեն (տե՛ս **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1969):

⁶ Վանք գյուղն անկասկած տարածաշրջանի հնագույն բնակավայրն է և հայ հոռոմ գյուղերից նշանավորը (տե՛ս **Ճանիկեան Յ.**, նշվ. աշխ., էջ 58): Սկզբնապես այն գտնվելիս է եղել հսկա քարածայրի վրա, որտեղ առ այսօր կանգուն են հնադարյան «Կույսի բերդի» ավերակները: Ըստ ավանդագրույցների՝ XIV դ. թուրքերը վանքցիներին ստիպել են ժայռից իջնել և դրա ներքևում՝ Եփրատի ձախ ափին, նոր գյուղ հիմնել: Այս նոր գյուղի եկեղեցին՝ Մբ Գևորգի անունով, կառուցվել է անտառամիջում: Հետագայում՝ 1722 թ., նոր եկեղեցի է կառուցվել գյուղից դուրս՝ Եփրատի ափի ժայռերի վրա: Ինչպես պատմում է ավանդագրույցը, Եփրատի ուժգին վարարման ժամանակ հեղեղը գետափի ժայռերին է բերել երկաթե մի դուռ՝ խաչը վրան: Գյուղացիները կարծել են, թե դա Մբ Գևորգի նշանն է, և որոշել են այնտեղ եկեղեցի կառուցել (տե՛ս **Բարթիկյան Հ.**, նշվ. աշխ., 256-257. **Ղազարյան Գ.**, «Ակնի հայ հոռոմները», էջ 21-23):

⁷ Հավանաբար հենց այս սրբավայրը նկատի ունի Հ. Ճանիկյանը, երբ գրում է. «Գիւղին վերէւ մորենիններու մէջ կայ ուխտատեղի մը որմնապատ, որոյ մէջ կայ քարէ պատկեր» (**Ճանիկեան Յ.**, նշվ. աշխ., էջ 58):

⁸ Տե՛ս *Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Βανκ».*

չի դնի: Այդ խոստումից հետո Մբ Գևորգը նրան ազատում է անտեսանելի կապանքներից: Կինը Վանք է հասնում, բոլորին պատմում հրաշքի մասին՝ զգուշացնելով, որ ծառ կտրելու նպատակով մարդիկ այլևս անտառ չգնան⁹:

Չորակ գյուղի եկեղեցին, որն այսօր կիսավեր վիճակում է, նվիրված է Մբ Նիկողայոս Մքանչելագործ հայրապետին¹⁰: Համաքրիստոնեական այս սուրբն ուղղափառ հայերի հրաշապատումներում ներկայացվում է որպես ծառերի պաշտպան¹¹: Այսպես, պատումներից մեկի համաձայն՝ ձորակցիները գնում են գյուղի անտառ՝ ծառ կտրելու, սակայն դա դուր չի գալիս Մբ Նիկողայոսին: Նա երագում հայտնվում է գյուղի քահանային ու ասում.

-Այլևս իմ անտառի ծառերը չկտրե՛ք: Ի՞նչ եք կարծում՝ ես կացին չունե՞մ: Եթե ուզենամ՝ ինքս կարող եմ կտրել:

Առավոտյան, երբ քահանան գնում է եկեղեցի, շեմի առջև գեղեցիկ մի կացին է գտնում: Գյուղացիներն այն անվանում են «Մբ Նիկողայոսի կացին», և մինչև այժմ այդ կացինը՝ որպես սրբություն, երկյուղածությամբ պահում են Կաստանիոտիսսայի Մբ Նիկողայոս եկեղեցում:

Հետևյալ երկու պատումներում Մքանչելագործ հայրապետը հանդես է գալիս որպես քրիստոնյաների պաշտպան: Այսպես, ինչ-որ թուրք իշխանավոր Չորակում արգելում է զանգ հնչեցնել: Գիշերը երագում նրան հայտնվում է սուրբը և ծեծում: Թուրքը սարսափած արթնանում է՝ ահավոր կապտուկներով և, բնականաբար, հետս է կոչում իր կարգադրությունը:

Հետաքրքրական է նաև մյուս պատումը. ինչ-որ կոտորածների ժամանակ (համիդյան, Մեծ եղեռնի, թե՛ ուրիշ՝ հայտնի չէ) թուրք հրոսակներն ուզում են մտնել Չորակ: Ճամփին նրանց դիմացն է ելնում խիստ դեմքով ու կացինը ձեռքին

⁹ Σε΄ u Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Βανκ». Նմանատիպ մի պատմություն առնչվում է Հունաստանի Մետեորա շրջանի Թաշկինակավոր Մբ Գևորգ վանքին: Մի «հազարացի», մտնելով վանքից ներքև գտնվող անտառը, ծառ է կտրում, սակայն ընկնում է ու անշարժանում: Հասկանալով, որ մեղք է գործել՝ մտնելով վանքապատկան տարածք, մահմեդականն սկսում է աղոթել Մբ Գևորգին՝ խոստանալով ապաքինման դեպքում վանքին նվիրել իր կնոջ թանկարժեք չադրան: Մբ Գևորգը կատարում է իր հրաշքը, մահմեդականն էլ՝ իր ուխտը (տե՛ս 'Ο πανταχού προφθάνων εις βοήθειαν. Τοῦ Ἁγίου Μεγαλομάρτυρος καὶ Τροπαιοφόρου Γεωργίου τοῦ Θαυματουργοῦ θαύματα παλαιά τε καὶ νέα ὡς καὶ ἡ τιμὴ του εἰς το Ἅγιον Ὅρος τοῦ Ἄθωνος, 2010, էջ 120): Մբ Գևորգը եկեղեցապատկան հողերի կամ առհասարակ ունեցվածքի հանդեպ ոտնձգություն կատարող մահմեդականներին խստիվ պատժում է (սրբապղծին ծեծելով կամ անշարժացնելով) հունական այլ հրաշապատումներում ևս (տե՛ս Նույն տեղում, էջ 102-103, 115-119):

¹⁰ Եկեղեցին վերանորոգվել է 1794 թ. ձորակցի իգիթբաշի Նիկոլ Պալյանի հովանավորությամբ (տե՛ս **Ղազարյան Գ.**, «Ակնի հայ հոռոմները», էջ 24):

¹¹ Մբ Նիկողայոսի մասին հրաշապատումները գրի ենք առել 2013թ. Կաստանիոտիսսա կատարած մեր այցելության ժամանակ:

մի ծերունի՝ արգելելով ջարդարարներին գյուղ մտնել: Սահմուկած թուրքերը մի քանի անգամ փորձում են այլ ճանապարհներով մտնել Ձորակ, սակայն ամեն անգամ կացնավոր ծերունին կտրում է նրանց առաջը: Թուրքերն այդպես էլ չեն կարողանում գյուղ մտնել ու ստիպված հեռանում են: Որոշ ժամանակ անց թուրքերի հրամանատարն ինչ-որ գործով նորից Ձորակ է ժամանում: Գյուղին մոտենալով՝ տեսնում է, որ ժողովուրդը խաչերթի է դուրս եկել: Հոգևորականների բռնած սրբապատկերին նայելով՝ հրամանատարն ապշում է. պատկերված ծերունին՝ Սբ Նիկողայոսը, հենց այն ծերունին էր, որ իրենց թույլ չէր տվել մտնել Ձորակ ու կոտորել գյուղացիներին՝ այդպիսով փրկելով նրանց:

Եվս մեկ հրաշապատում՝ այս անգամ Տիրամոր հետ կապված. մի թուրք մարդ կթում է կովը և Տիրամոր մի հնամենի սրբապատկեր՝ գրեթե ջնջված, դնելով կաթի ամանի բերանին՝ որպես կափարիչ, գնում է ուրիշ գործերի: Վերադառնալով տեսնում է, որ «տախտակն» առանձին մի կողմ է դրված: Թուրքը նորից սրբապատկերը դնում է կաթի բերանին, սակայն քիչ անց հրաշքը կրկնվում է: Ի վերջո, զայրացած, սրբապիղծը կացնով փորձում է կոտորել սրբապատկերը, սակայն կացինը Աստվածամոր դեմքին դիպչելուն պես տախտակից արյուն է դուրս վազում: Լեղապատառ թուրքն շտապում է հայ հոռոմների մոտ՝ պատմելու հրաշքի մասին¹²:

Հեքիաթներ և ավանդագրույցներ

Ակնցի հայ հոռոմներից պահպանվել են նաև երկու հեքիաթ, որոնցից մեկը կոչվում է «Խելառ կինը», մյուսը՝ «Ծերունին ու ջահել կինը»:

«Խելառ կինը»

Մի մարդ խելառ կին է ունենում: Օրերից մի օր կնոջը բամբակ է բերում՝ պատվիրելով այն մանել: Խելառ կինը բամբակը տանում է ջրի մոտ, դնում գորտերի առաջ, թե՛ բամբակը մանեք, մեկ շաբաթից կգամ վերցնելու: Մի շաբաթ անց խելառ կինը գնում է գորտերի մոտ, բայց ոչինչ չի գտնում. ջուրը բամբակը տարած է լինում: Կինն սկսում է դես ու դեն փնտրել ու մի քարի վրա ձվի չափ աղամանդ է գտնում¹³: Երբ տուն է գալիս, մարդուն է ցույց տալիս՝ պատմելով, որ

¹² Այս հրաշապատումը ևս գրի ենք առել 2013 թ. Կաստանիոտիսսա կատարած մեր այցելության ժամանակ:

¹³ Հեքիաթի սկիզբը հիշեցնում է Հ.Թումանյանի «Անբան Հուրին» հեքիաթի սկզբնամասը: Հետաքրքրական է, որ հայոց մեջ IX դ. վկայված է «Հուր» անձնանունը, սակայն մեկ անգամ, այն էլ՝ որպես արական: Կա նաև «Հուրիկ»/«Խուրիկ» իգական անունը, որը «Հոփսիմե»-ի կրճատ ձևն է (տե՛ս **Աճառեան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. 3, Եր., Պետական համալսարանի հրատ. 1946, էջ 97): Կարծում ենք՝ կարելի է ենթադրել, որ թումանյանական «Հուրի» անձնանունը կարող է հենց «հոռոմ» բառի փոփոխված տարբերակը լինել:

բամբակը գորտերին է տվել, որ մանեն, իսկ գորտերը բամբակի տեղը ադամանդ են տվել իրեն:

Մարդը հասկանում է, որ խելառ կինը գլխներին մի փորձանք կբերի, և ասում է կնոջը.

-Ես քեզ շտապ պիտի թաքցնեմ, որովհետև խոշոր կարկուտ պիտի գա. Եթե դուրսը մնաս, կարկուտն աչքերդ կփչացնի, էլ բան չես տեսնի:

Այսպես ասելով՝ մարդը կնոջը տանում, մի փոսի մեջ է իջեցնում, իսկ փոսի վրա թիթեղ է դնում ու վրան գարի լցնում: Ջրհորի միջից կտկտոցը լսելով՝ կինը կարծում է, թե իսկապես կարկուտ է գալիս: Իսկ մարդն այդ ընթացքում ադամանդը թաքցնում է: Մեկ օր անց, երբ կնոջը հանում է փոսից, խելառն սկսում է սրան-նրան պատմել, որ ինքը ձվի չափ պսպղուն մի բան է ջրից գտել: Լուրը հասնում է թագավորի ականջը, սա էլ մարդիկ է ուղարկում՝ ադամանդը բերելու: Կինը սակայն ասում է, որ ադամանդը մարդուն է տվել: Հարցնում են մարդուն՝ թե քարն ո՞ր է:

-Ի՞նչ ադամանդ, ի՞նչ բան, - գարմանում է մարդը. - կինս խելառ է, մի քիչ հետը զրուցեք, կհամոզվեք:

Թագավորի սուրհանդակները նորից կնոջն են դիմում.

-Ադամանդը ե՞րբ ես գտել:

Այդ հարցնող մարդը մի աչքից կույր է լինում: Խելառ կինը նայում է նրա դեմքին ու ասում.

-Ա՛յ էն օրը, երբ կարկուտն եկավ ու աչքդ հանեց:

Թագավորի մարդիկ հասկանում են, որ կինը խելառ է, ու ձեռնունայն հեռանում են¹⁴:

«Ծերունին ու ջահել կինը»

Մի ծերունի ջահել կին է առնում: Մի գիշեր նկատում է, որ կինն արթնանում է, հագնվում ու տնից դուրս է գալիս, ապա որոշ ժամանակ անց վերադառնում է: Դա կրկնվում է, ու մի անգամ, երբ կինը գիշերով տնից դուրս է գալիս, ծերունին ելնում, տան դուռը կողպում է: Կինը վերադառնալով՝ դուրսն է մնում:

-Հը՞, հիմա խայտառակ եղա՞ր, - դռան ետևից ասում է մարդը:

- Դե թող հիմա մարդիկ իմանան, որ մարդ ունես, բայց ուրիշի մոտ ես գիշերները գնում:

Կինն սկսում է մարդուն աղաչել-պաղատել, որ դուռը բացի, սակայն իզուր:

- Դե, որ այդպես է, - ասում է կինը, - ես ինձ ջրհորը կզցեմ, մեղքը թող քո վիզը լինի:

Գնում է ջրհորի մոտ ու մի մեծ քար զցում մեջը: Ծերունին, դռան ետևից

¹⁴ Տե՛ս Кέντρο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Βανκ»:

ջրի ձայնը լսելով, դուռն անմիջապեսս բացում է, վազում ջրհորի մոտ՝ կնոջը փրկելու: Խորամանկ կինը թաքստոցից ելնում, մտնում է տուն ու դուռը կողպում: Խեղճ ծերունին դուրսն է մնում, իսկ կինն սկսում է բղավել.

-Ժողովու՛րդ, արթնացե՛ք, տեսե՛ք անամոթ ծերուկին, որ հա՛մ ինձ պես ջա-
հել կին ունի, հա՛մ էլ գիշերն ուրիշի մոտ է գնում: Այս աղմուկի վրա մարդիկ
արթնանում են, հարայ-հրոց գցում, ոստիկաններ են կանչում ու խեղճ մարդուն
բանտն են գցում:

«Խորամանկ կինն աշխարհում մեծ չարիք է գործում» եզրափակում է
հեքիաթը¹⁵:

Ընտանեկան խնդիրներին է նվիրված նաև «Ուրիշի դարդը երբեք չգիտես»
առակը. Մի մարդ շատ գեղեցիկ, բայց շատ չար կին է ունենում: Երկար չարչար-
վելուց հետո վերջապես բաժանվում է կնոջից: Մեկ ուրիշը, դրա մասին իմանա-
լով, սկսում է մարդուն կշտամբել, թե՛ այդքան լավ կնոջն ինչու՞ ես թողել: Մարդը
պատասխանում է.

-Հազիս գեղեցիկ կոշիկը տեսնու՞մ ես: Միայն ե՛ս գիտեմ, թե կոշիկը
որտե՛ղ է ոտքս սեղմում:

«Ուրիշի դարդը երբեք չգիտես, մի՛ խառնվիր», - եզրակացնում է առակը¹⁶:

Վանքի հայ հոռոմների մեջ տարածված են եղել ոմն խոջայի մասին պա-
տումները, թեպետ նրանք չեն իմացել, թե ո՛վ է այդ խոջան: Խոսքը հարկավ խոջա
Նասրեդինի մասին է: Ահա այդ պատումներից մեկը՝ «Հղի կովն ու խոջայի
աղջիկը» վերնագրով. Խոջան ծեր կով է ունենում և կնոջ հետ կովը տանում է
շուկա, որտեղ խոջան սկսում է գովել կենդանուն.

-Կովս ջահել է, վեց ամսվա հղի է:

Ի վերջո, մի մարդ հավատում է գովագղին ու կովն առնում է: Դրանից մի
շաբաթ անց խոջան մտածում է իր աղջկան ամուսնացնել: Այդ նպատակի հա-
մար երկու հարսնատես կանայք են գալիս խոջայենց տուն՝ խնամախոսության
գործը կազմակերպելու: Խոջայի կինը, որը շուկայում ներկա է լինում կովի
հաջող վաճառքին, չի թողնում, որ ամուսինը խոսի, այլ առաջ ընկնելով, սկսում
է աղջկա գովքն անել.

-Մեր աղջիկը ջահել է, վեց ամսվա հղի է...

Լսելով այս՝ խնամախոսներն անմիջապես վեր են կենում ու հեռանում¹⁷:

¹⁵ Նույնը:

¹⁶ Տե՛ս Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-1, Βανκ»:

¹⁷ Նույնը: Նասրեդինի մասին պատումների ռուսերեն ժողովածուի մեջ, որտեղ ընդգրկված է 1238
միավոր, այս պատումը չկա: Ավելին, նմանօրինակ որևէ պատում չգտանք նաև Նասրեդինի հու-
նարեն հրատարակության մեջ, որտեղ ամփոփված են ոչ միայն Փոքր Ասիայի, այլև Հունաստա-

Պետք է նշել, որ այս ամենից բացի, հայ հոռոմները լավ են իմացել հայոց պատմությունը, օրինակ այն, որ Հայաստանն «Արմենիա» է կոչվել Արամ թագավորի անունով, իսկ հայերը՝ «հայ» իրենց առաջին թագավոր Հայկի անունով, որ Հայաստանն առաջ հզոր ու մեծ պետություն է եղել, որ հայերը հնում արեգակն ու աստղերն են պաշտել: Հայ հոռոմներն իմացել են Լուսավորչի վարքը՝ թե՛ պետն փոքրիկ սխալներով: Իմացել են նաև, որ հայերի՝ Եփրատ գետում մկրտվելուց հետո Շապուհը մեծ հալածանք է սկսել հայերի դեմ, բազում մարդկանց կոտորել և միայն Մեծն Կոստանդինոսի սպառնալիքից հետո է հայերին հանգիստ թողել¹⁸:

Ավանդություններ

Հունաստանում պահվող արխիվային փաստաթղթերում և մի քանի տպագիր նյութերում որոշ տեղեկություններ են պահպանվել նաև հայ հոռոմների հարսանեկան ու թաղման ծեսերին, եկեղեցական կյանքին¹⁹ ու առօրյային առնչվող ավանդույթների ու սովորությունների մասին, որոնք թույլ են տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել հայ ժողովրդի այդ յուրահատուկ էթնոդավանական խմբի ազգագրական պատկերի մասին:

Մասնավորապես, հետաքրքրական են հայ հոռոմների թաղման ավանդույթները: Օրինակ՝ եթե մարդն առավոտյան կամ կեսօրին է մահացել, ապա նրան նույն օրն են թաղել, իսկ եթե կեսօրից հետո, ապա դին մեկ գիշեր եկեղեցում են թողել: Որպես սգո նշան՝ տղամարդիկ չեն սափրվել և հագուստներից մեկը թարս են հագել: Մահվան օրվանից սկսած՝ ամեն օր, որպես ննջեցյալի բաժին՝ մի ափսե կերակուր են տվել որևէ աղքատի: Դա արել են մեկ տարի շարունակ, իսկ տարին լրանալուց հետո՝ ամեն շաբաթ-կիրակի: Հոգեհանգստյան կարգը կատարել են ըստ օրթոդոքս ծիսակարգի՝ 3-րդ, 9-րդ, 40-րդ օրերը, ապա երրորդ և վեցերորդ ամսին, տարելիցին ու երեք տարի անց²⁰: Հայ հոռոմների

նի տարածքում շրջանառված պատումները: Սա խոսում է այն մասին, որ վերնաբերյալ հայկական պատումն իր տեսակի մեջ եզակի է (հմմ. Двадцать четыре Насреддина/Сост., вступит. статья, примеч. и указатели М. С. Харитоновна, 2-е издание. М.: гл. Ред. Вост. Литературы, 1986; *Νασρεντίν Χότζας. Ιστορίες και χωρατά από τη Μικρά Ασία και τον ελλαδικό χώρο*, Κέντρο Ανατολικών Γλωσσών και Πολιτισμού, Αθήνα, 2010).

¹⁸ Κέντρο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-2, Μουσεγκά»: Այս մասին պատմում է Մր. Եկեղեցական պատմիչ Սոզոմենոսը (տե՛ս **Sozomène**, Histoire Ecclésiastique, Livres I-II, Texte Grec de l'édition J. Bidez, Sources Chrétiennes, էջ 288):

¹⁹ **Պապանդրեոս Դամասկիեոս վրդ.**, Հայ Եկեղեցու հիմնադրումը և կազմավորումը մինչև Դ Տիեզերական ժողովը, թարգմ. Եզնիկ ծ.վրդ. Պետրոսյանը, Սբ Էջմիածին, 1997, էջ 68-70:

²⁰ Κέντρο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-2, Μουσεγκά»: Հայ հոռոմները որպես հոգեհաց բաժանել են «գոլովա», այսինքն՝ խաշած ցորեն (տե՛ս **Ճանիկեան Յ**, նշվ. աշխ., էջ 57): Խոսքն օրթոդոքս ծիսակարգով մեռելոցներին ու հոգեհանգիստներին

գերեզմաններն ունեցել են կա՛մ հողաթումբ, կա՛մ շիրմաքար: Ի տարբերություն հույների՝ նրանք գերեզմանին կանթեղ չեն վառել, այլ միայն մոմ: Նորից ի տարբերություն հույների՝ արտաշիրիմում չեն կատարել: Յուրաքանչյուր ընտանիք իր տոհմական գերեզմանոցն է ունեցել²¹:

Հայ հոռոմների մեջ վառ է եղել կրոնական ջերմեռանդությունը, հատկապես Աստվածամոր և Սբ Գևորգի հանդեպ: Վանքի անտառը շատ ծաղիկներ է ունեցել, դրանք բոլորը «նարվոս» են կոչվել: Հայ հոռոմները դրանք հավաքել են ու եկեղեցում Տիրամոր սրբապատկերի առջև են դրել՝ հավատալով, որ նարվոսն Աստվածածնի ծաղիկն է²²: Ամեն տարի ապրիլի 23-ին՝ Սբ Գևորգի տոնին, Վանքի եկեղեցում տոնական հանդիսավոր պատարագ է մատուցվել, մեծ տոնախմբություն է կատարվել, որին հյուր են եկել նաև մնացած գյուղերի բնակիչները: Պատարագից հետո կանայք եկեղեցու տրամագծով շուրջպար են բռնել: Տոնին տրվել է նաև մատաղ, մորթվել են եզներ, որոնց եղջուրներին մուներ են վառել²³: Հետաքրքրական առանձնահատկություն է եղել Սբ Գևորգի հետ դեղին գույնն աղերսելը. հայ հոռոմները կարծել են, թե դա սրբի սիրած գույնն է: Որպեսզի Սբ Գևորգին հաճոյանան, կանայք նրա տոնին հնարավորինս շատ դեղին շորեր են հագել ու դեղին ձվեր պատրաստել՝ դրանք ներկելով նշենու տերևների եփուկով: Նույնիսկ Զատիկի տոնին ձվերի մի մասը ոչ թե կարմիր, այլ դեղին են ներկել՝ ի պատիվ Սրբի: Այս ավանդույթները պահպանվել են մինչև 1908թ., այնուհետ, երբ արտագաղթի պատճառով Վանքն սկսել է ամայանալ, դրանք մոռացության են մատնվել. գյուղացիները Սբ Գևորգի տոնին շարունակել են հին եկեղեցի այցելել, սակայն արդեն բավարարվել են սոսկ մոմավառությամբ²⁴: Ապրիլի 23-ին տոնախմբություն է կատարվել նաև Մուշեղկայի Սբ Գևորգ եկեղեցում, որին հյուր են եկել մյուս գյուղերի մուշեղկացիները, Հոդուսի ու Մամսայի հայ հոռոմները, առաքելական հայերն ու թուրքերը²⁵:

օրինվող κόλλυβα-յի մասին է: Ի դեպ, «կուլիբայ»/«կուլիվայ» ձևով այս բառն ամրագրված է նաև գրաբարի գանձարանում (տե՛ս Նոր Բաղգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 1122):

²¹ Տե՛ս Κέντρο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-2, Μουσεγκά»:

²² Նույնը:

²³ Սբ Գևորգի պատվին ցուլ մատաղ անելը վաղնջական արմատներ ունի և տարածված է եղել Հայքում ու Վիրքում: Ըստ երևույթին, Միհրի պաշտամունքի մի վերհուշ է (տե՛ս **Հակոբյան Հ.**, «Հին Հայաստանի առնչությունը Միթրային նվիրված հոռոմական տաճարներին» (նախնական դիտողություններ)//Անտառ Ծննդոց: Հողվածների ժողովածու՝ նվիրված Ֆ. Տեր-Մարտիրոսովի հիշատակին, Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջ 183):

²⁴ Տե՛ս Κέντρο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη1, Βανκ»:

²⁵ Տե՛ս Κέντρο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-2-Μουσεγκά»:

Փոքրասիական հետազոտությունների կենտրոնի ծրարներում արժեքավոր տեղեկություններ կան նաև հայ հոռոմների խոնարհված սրբատեղիների, նրանց հետ կապված բարեպաշտական ավանդույթների մասին: Այսպես, Մուշեղկայից Շրգու ընկած ճանապարհին են գտնվել Սբ Պետրոս-Սբ Պողոս եկեղեցու ավերակները: Մեկ այլ եկեղեցի՝ Սբ Մկրտչի անունով, անտանիք է եղել, սակայն պատերը՝ կանգուն: Ամեն տարի՝ Սբ Կարապետի գլխատման տոնին՝ օգոստոսի 29-ին, այստեղ ս. Պատարագ է մատուցվել, իսկ երկու շաբաթը մեկ կանայք գնացել են՝ խոնարհված եկեղեցու կանթեղը վառելու: Տիրամոր Ննջման տոնին՝ օգոստոսի 15-ին, պատարագել են նաև Աստվածամոր անունը կրող մեկ այլ խոնարհված եկեղեցու²⁶:

Հունաստանում ուշագրավ տեղեկություններ են պահպանվել նաև Երզնկայի հայ հոռոմների Հողուս գյուղի ավանդույթների մասին: Հողուսի եկեղեցին՝ Աստվածամոր անունով, եղել է քարաշեն, շատ ցածր դռնով, որպեսզի ձիավոր թուրքերը չկարողանան ներս մտնել: Եկեղեցին ունեցել է ն՝ սրբապատկերներ, ն՝ որմնանկարներ: Օգոստոսի 15-ին եկեղեցու բակում գառան մատաղ է կատարվել, որը կոչվել է «Աստվածամոր դուրբան»: Եփրատ գետից այն կողմ՝ հայ առաքելական գյուղերի շրջապատում, գտնվելիս են եղել ուղղափառ հայոց ավերակ սրբատեղիները՝ Սբ Խառալամպոսը, Սբ Վարվառան ու Սբ Սաբբան²⁷: Բոլոր գյուղացիներն այս սրբավայրերն այցելել են նշված սրբերի տոներին՝ համապատասխանաբար փետրվարի 10-ին, դեկտեմբերի 4-ին և 5-ին: Սբ Վարվառայի տոնին հայ հոռոմները հյուրընկալվել ու գիշերել են հայերի տներում, առավոտյան գնացել են մոմավառության Սբ Սաբբային, ապա Հողուս վերադարձել: Հողուսից դուրս եղել են չորս այլ խոնարհված սրբավայրեր՝ Սբ Դիմիտրիոս, Սբ Նիկողայոս, Սբ Գևորգ և Սբ Թեոդորոս: Առաջին երկուսի պատերը կանգուն են եղել, այնտեղ պահվել են Սբ Դիմիտրիոսի և Սբ Նիկողայոսի պատկերները՝ կանթեղով: Հոկտեմբերի 26-ին՝ Սբ Դիմիտրիոսի տոնին, առաջին մատուռում ս. Պատարագ է մատուցվել, ոչխար կամ այծ են մատաղ արել: Ուշագրավ է, որ այս սրբին թուրքերը «Կասիմ» են անվանել: Ինչ վերաբերում է Սբ Թեոդորոսին, ապա սրբաբակում թաղել են երեխաներին, մինչդեռ գյուղի Սբ Աստվածածին եկեղեցու

²⁶ Σε΄υ Κέντρο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-2-Μουσεγκά»:

²⁷ Հողուսի շրջակայքում եղել են 15 մատուռներ: Սրբավայրերի այսպիսի առատությունը բացատրվել է այնու, որ իբր դրանք կառուցվել են, որպեսզի այնտեղ ծառայելու համար նախատեսված անձինք ազատվեն զինվորական ծառայությունից (տե՛ս **Λομτσίδης Κ.** «Χογούζ. Ἑλληνικὸν Ἀρμενόφωνον χωρίον τοῦ Ἐρζιγγιᾶν Πόντου»//Ποντιακή Εστία, 1956, τευχ. 74-75, էջ 3579):

բաղում՝ միայն մեծահասակներին: Հողուսի շիրիմներին միայն պարզ խաչ են տեղադրել²⁸:

Հողուսին մոտ է Փերեզակ սարը, որի վրա եղել են Սբ Եղիա մատուռի ավերակները: Երաշտի ժամանակ հողուսցիները՝ քահանան, գյուղի ուսուցիչը երեխաների հետ ու շատ ծեր կանայք, սար են բարձրացել՝ անձրևի համար մաղթանք կատարելու: Երեխաներն ու ծերերն անմեղ են համարվել, իսկ մյուս գյուղացիների ներկայությունը մաղթանքին արգելված է եղել, որպեսզի նրանց մեղքերն աղոթքի ներգործությանն արգելք չդառնան: Մաղթանքից հետո երկու-երեք այծ են մորթել ու տվել, որ երեխաներն ուտեն: Սարից իջնելիս, ինչպես տեղեկատուներն են պատմել, միշտ անձրև է սկսվել²⁹:

Հողուսցիները հաճախ խնամություն են արել ակնցի հայ հոռոմների հետ: Հարսանիքին հրավիրել են՝ հարազատների տուն խմորեղեն կամ հալվա ուղարկելով: Հարսը քողը երեսին է պահել 40 օր շարունակ, այնուհետ քողը հանել է հարսանիքի քավորը: Հարսանիքից հետո մեկ շաբաթ նորապսակները փակված են մնացել իրենց սենյակում, այնուհետ հարսը ամուսնու բարեկամներին է բաժանել նրանց նվերները: Ամուսնական կյանքի առաջին մի քանի տարիներին հարսը չի խոսել ամուսնու հարազատների հետ³⁰: Հողուսի տները եղել են հայկական ավանդական գլխատուն՝ կիսով չափ հողի մեջ, քարաշեն, միահարկ, ուղղանկյուն երկու բաժանմունքով, թոնրով, որտեղ և թխել են լավաշը³¹:

Եզրահանգում. Փաստ է, որ հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ժառանգության հարստությունն ապահովվում է, ի միջի այլոց, նաև բազմաշերտությամբ ու բազմազանությամբ: Հայ հոռոմները դրա վառ ապացույցն են. լինելով հայ ժողովրդի անքակտելի մասը և ընդհանուր հայ մշակույթի կրողները՝ հայ հոռոմները, շնորհիվ դավանական տարբերության, ունեցել են իրենց յուրահատկությունները, որոնք արտահայտված են նրանց բանահյուսության մեջ: Հուսով ենք, որ այս ներկայացմամբ հրապարակված նյութի հետագա, մասնագիտական ուսումնասիրությունը՝ կատարված ազգագրագետների կողմից, կնպաստի ոչ միայն հայ ժողովրդի այդ ինքնատիպ ենթախմբի նկարագրի ավելի խորը ճանաչմանը, այլև արժեքավոր կլինի առհասարակ հայագիտական լայն հետաքրքրությունների համար:

²⁸ Տե՛ս Κέντρο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος «Χώρα Ευφράτη-9-Χογούζ»:

²⁹ Նույնը:

³⁰ Տե՛ս **Μαραβελάκης Μ., Βακαλόπουλος Α.** Αί προσφυγικαί ἐγκαταστάσεις ἐν τῇ περιοχῇ Θεσσαλονίκης, Θεσσαλονίκη, 1955, էջ 110:

³¹ Նույն տեղում, էջ 110-111:

ПРЕДАНИЯ И ОБЫЧАИ ХАЙ ХОРОМОВ
ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Казарян Г. С.

Ключевые слова: *этнография, армянский фольклор, сказка, святой Георгий, святой Николай, Акн, православные армяне.*

Православные армяне или так называемые «хай хоромы» (т. е. армяне ромеи) являются важной частью армянского народа, занимая свое особое место в истории Армении, в ее духовном и культурном наследии. В фольклоре православных армян примечательны предания акнцев, некоторые из которых относятся к жанру сказаний о чудесах святых. В этой группе рассказы о святых Георгии Победоносце и Николае Чудотворце. В них эти святые предстают как защитники деревьев, растительности, и строго наказывают тех, кто грешит против природы. Кроме того, в рассказах акнцев святитель Николай является защитником христиан. Другая группа рассказов относится к жанрам сказки и анекдота. В архивных материалах, хранящихся в Греции и в нескольких опубликованных материалах сохранились сведения о свадебных, погребальных обрядах хай хоромов, данные о традициях и обычаях, относящиеся к их церковной и обыденной жизни. Эти свидетельства помогают нам составить более полное представление об этнографическом облике этой уникальной конфессиональной группы армянского народа.

THE TALES AND TRADITIONS OF HAY HOROMS
OF WESTERN ARMENIA

Kazaryan G. S.

Key words: *ethnography, Armenian folklore, fairy tale, St George, St Nicholas, Akn, Orthodox Armenians.*

Orthodox Armenians or the so-called “Hay Horoms” are an important part of the Armenian people, occupying a special place not only in the history of Armenia, but also in its spiritual and cultural heritage. In the folklore of Orthodox Armenians the traditions of Akn are remarkable, some of which belong to the genre of legends about the miracles of saints. In this group there are stories about St George and St Nicholas the Wondermaker. In them, these saints appear as protectors of trees, vegetation, and severely punish those who sin against nature. In addition, in these stories, St. Nicholas is the defender of Christians. Another group of stories relates to the genres of fairy tales

and anecdote. The archival materials stored in Greece and in several published materials contain information about the wedding, funeral rites of Hay Horoms, data on traditions and customs relating to their church and everyday life. This information helps us to have a more complete picture of the ethnographic image of this unique confessional group of Armenians.

References

1. Akn yew aknc' in. 1020-1915, hawakec, dasaworec yew xmbagrec **A. K'eċean**, Bucharest, տր. «Hay mamul», 1942 **(In Armenian)**.
2. Akn yew akncik', naxadzer nec yew hawak'ec **A. K'eċean**, xmb. **M. Par samean**, Paris, 1952 **(In Armenian)**.
3. **Bartikyan H.** Hay horomner (k'aĳkedonik hayer) hunakan parberakannerum// Patmabanasirakan handes, 2008, № 3, pp. 237-260 **(In Armenian)**.
4. **Ćanikean Y. K.** Hnut'yunk' Aknay, T'iflis, 1895 **(In Armenian)**.
5. Dvadcat chetire Nasreddina/Sost., vstupit. statya, primech. i ukazateli M. S. Kharitonova, 2-e izdanie, M., red. Vost. Literaturi, 1986 **(In Russian)**.
6. **Hakobyan H.** « Hin Hayastani arnĳutyunā Mitrayin nvirvac hromeakan taĳarnerin (naxnakan ditohutyunner)//Antar' Cnndoc': Hodvacneri ųohovacu nvirvac F. Ter-Martirosovi hiĳatakin, Yerevan, EPH hrat., 2015, pp. 172-206 **(In Armenian)**.
7. **Kazaryan G.** Akni hay horomner@, Vardzk', №12, 2016, pp.19-26 **(In Armenian)**.
8. **Kazaryan G.,** Akni Vank' gyuĳi 1787 t' vakani hay horomneri Avetaran@//Banber Matenadarani, 24, 2017, pp. 221-232 **(In Armenian)**.
9. **Kazaryan G.** Hay horomneri azgayin inknuthyan xndri ųurj//L.Xachikyan-.Haryuramyak: Nyuter akademikos L.Xachikyani cnndyan haryuramyakin nvirvac haya-gitakan mijazgayin gitaųohovi 2018 t, Yerevan, Mane tanadaran, 2019, pp. 180-204 **(In Armenian)**.
10. Kentro Mikrasiatikon Spoudon/Arkheio proforikis paradosis/fakelos «Khora Euf-rati-1» **(In Greek)**.
11. Kentro Mikrasiatikon Spoudon/Arkheio proforikis paradosis/fakelos « Khora Eurati-9-Khogouz» **(In Greek)**.
12. Kentro Mikrasiatikon Spoudon/Arkheio proforikis paradosis/fakelos « Khora Euf-rati-2, Mousegka» **(In Greek)**.
13. **Lamtsidis K.** « Khogouz. Ellinikon Armenofonon khorion tou Erziggian Pontou//Pontiaki Estia, 1956, teukh. 74-75, pp. 3578-3581 **(In Greek)**.
14. **ĳanalanyan A.** Avandapatum, Yerevan, HSSH GA hrat., 1969 **(In Armenian)**.

15. **Maravelakis M., Vakalopoulos A.** Ai prosfigiakai egkatastaseis en ti periokhi Thessalonikis, Thessaloniki, 1955. **(In Greek)**.
16. **Nasrentin Khotzas** Istories kai khorata apo ti Mikra Asia kai ton elladiko khoro, Kentro Anatolikon Glosson kai Politismou, Athens .²2010 **(In Greek)**.
17. Nor Bargirk' Haykazean Lezwui, h. 1, Venice, 1836 **(In Armenian)**.
18. **Papandreou Damaskinos vrd.** (Mitropolit Šveycariayi), Hay yekelecuc himnadrum@yev kazmavorum@minchev D Tiezerakan žořov@, hun. t'argm. Eznik c. vrd. Petrosyan, S. Ejmiacin, 1997 **(In Armenian)**.

Ընդունվել է՝ 03. 02.2020

Գրախոսվել է՝ 01. 04. 2020

Հանձնվել է սույ.՝ 20. 11. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Գևորգ ՂԱԶԱՐՅԱՆ՝ Աթենքի ազգային համալսարանի
աստվածաբանության ֆակուլտետի դոկտորանտ,
էլ. հասցե՝ dngevorg@gmail.com